Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ։

ԳԵՆՐԻԽ

Հեքիաթային սառնամանիք մի իրիկուն, երբ այգիները մանիշակագույն էին եղյամից, կտրիճ կառապան Կասատկինը՝ բարձր, նեղլիկ սահնակով սլացնում էր Գլեբովին Տվերսկայայով ցած դեպի Լոսկուտնայա հյուրանոցը. մտել էին Ելիսեևկա՝ միրգ և գինի գնելու: Մոսկվայի օրը դեռ չէր մթնել, դեպի արևմուտք կանաչին էր տալիս մաքուր ու թափանցիկ երկինքը, բացվածքներում հազիվ նկատելի երևում էին զանգակատների կատարները, իսկ ցածում, գորշակապույտ սառնամանիք մշուշի մեջ, արդեն մթնում էր ու անշարժ, մեղմ փայլփլում էին նոր վառված լապտերների լույսերը:

Լոսկուտնայայի մուտքի մոտ, գայլի մորթուց ծածկոցը մի կողմ հրելով, Գլեբովը ամբողջապես ձյունափոշիով պատած Կասատկինին հրամայեց մի ժամից գալ իր ետևից:

— Կտանես ինձ Բրեստի կայարան:

— Լսում եմ,— պատասխանեց Կասատկինը:— Արտասահման եք մեկնում ուրեմս:

— Այո, արտասահման:

Բարձր, ծեր վարգաձին թափով շրջելով, սահնակաձողերը ճռճռացնելով, Կասատկինը դժգոհ տարուբերեց փափախով գլուխը.

— Խելքիդ բրդեց, էլ չես պրծնի:

Մեծ և փոքր-ինչ անբարեկարգ նախասրահ, ընդարձակ վերելակ և խայտաբղետ աչքերով, ժանգազույն պեպենոտ տղեկ Վասյան, որ իր պստլիկ համազգեստով քաղաքավարի կանգնած էր, մինչ վերելակը դանդաղ ձգվում էր վերև, և հանկարծ ափսոսաց թողնել այս ամենը՝ վաղուց ծանոթ, սովոր: «Իսկապես, ինչո՞ւ եմ մեկնում»: Նայեց իրեն հայելու մեջ՝ ջահել կայտառ, չոր-ազնվազարմ, աչքերը փայլում են, գեղեցիկ բեղերին եղյամ, լավ ու թեթև հագնված... Նիցցայում հիմա սքանչելի է, Գենրիխը հիանալի ընկեր է... և կարևորը՝ միշտ թվում է, թե ուրիշ ինչ-որ տեղ լինելու է առանձնահատուկ երջանիկ մի բան, մի որևէ հանդիպում... Կանգ ես առնում մի տեղ ճանապարհին,— ով է այդտեղ ապրել քեզնից առաջ, ինչ է կախված եղել, ինչ է դրված եղել հանդերձապահարանում, սա ո՞ւմ կանացի հերակալներն են գիշերասեղանիկին մոռացված: Նորից կլինի գազի հոտը, սուրճ ու գարեջուր Վիեննայի կայարանում, ավստրիական և իտալական գինու շշերն իրենց պիտակներով՝ արևով ողողված վագոն-ռեստորանում Զեմմերինգի ձյունների մեջ, եվրոպացի տղամարդկանց և կանանց դեմքերն ու հագուստները, որ լցվում են այդ վագոն՝ նախաճաշի…

Հետո գիշեր, Իտալիա... Առավոտյան, ծովի եզերքով դեպի Նիցցա ճանապարհին մերթ անցումներ թունելի դղրդացող ու ծխոտ մթության մեջ և թույլ վառվող լամպիկներ կուպեի առաստաղին, մերթ կանգառներ, և քնքուշ ու անդադար ողողանջող չգիտես ինչ ծաղկած վարդենիներով փոքրիկ կայարաններում, տաք արևի տակ թանկագին քարերի համաձուլվածքի պես մարմրող փոքրիկ ծովածոցի ափին... Եվ նա արագ քայլեց Լոսկուանայայի տաք միջանցքների գորգերի վրայով:

Համարում նույնպես տաք էր, հաճելի: Պատուհանից դեռ լույս էր ներս սփռում իրիկնամուտը՝ թափանցիկ, գոգավոր երկինքը: Ամեն ինչ հավաքված էր, ճամպրուկները պատրաստ: Եվ նորից մի քիչ տխրություն եկավ վրան, ափսոսում էր թողնել սովոր սենյակն ու ողջ մոսկովյան ձմեռային կյանքը, և Նադյային, և Լիին…

Նադյան ուր որ է պետք է գար հրաժեշտ տալու: Նա շտապով թաքցրեց ճամպրուկի մեջ գինին և միրգը, վերարկուն և գլխարկը նետեց կլոր սեղանի ետև դրված բազմոցին և անմիջապես լսեց դռան բախոցը: Դուռը

բացելուն պես, աղջիկը ներս ընկավ ու փաթաթվեց նրան, ամբողջապես սառն ու քնքուշ-անուշաբույր, սկյուռի մուշտակով, սկյուռի գլխարկով՝ տասնվեց տարեկանի, սառնամանիքի, կարմրած փոքրիկ դեմքի և պայծառ կանաչ աչքերի իր ողջ թարմությամբ:

— Մեկնո՞ւմ ես:

— Մեկնում եմ, Նադյուշա…

Աղջիկը հառաչեց և ընկավ բազկաթոռին, մուշտակն արձակելով:

— Գիտես, փառք աստծու, գիշերը տկարացա... Ա՜խ, ինչքան կուզեի քեզ ուղեկցել կայարան: Ինչո՞ւ թույլ չես տալիս:

— Նադյուշա, ինքդ էլ գիտես, որ դա անհնարին է, ինձ ճանապարհելու են քեզ բոլորովին անծանոթ մարդիկ, դու քեզ ավելորդ, միայնակ կզգաս...

— Իսկ քեզ հետ մեկնելու համար, ես, երևի, կյանքս կտայի:

— Իսկ ե՞ս: Բայց դու հո գիտես, որ դա անհնարին է…

Նա կիպ նստեց աղջկա կողքին բազկաթոռի մեջ, համբուրելով նրա տաք պարանոցը, և իր այտի վրա զգաց աղջկա արցունքները:

— Նադյա, սա ի՞նչ է, ինչո՞ւ:

Աղջիկը նրան դարձրեց դեմքն ու իր վրա ջանք գործադրելով ժպտաց.

— Ոչ, ոչ, չեմ անի: Չեմ ուզում քեզ կնկավարի ճնշել, դու բանաստեղծ ես, քեզ ազատություն է պետք:

— Խելոքս,— ասաց նա, սրտաշարժվելով աղջկա լրջությունից, նրա մանկական կիսադեմից՝ մաքուր, քնքուշ, այրվող շիկնած այտ, եռանկյունի կտրվածքի կիսաբաց շուրթեր, վեր բարձրացրած արցունքաթաթախ թարթիչի հարցական անմեղություն:— Դու նման չես ուրիշ կանանց, դու ինքդ բանաստեղծուհի ես:

Աղջիկը ոտքը դոփեց գետնին.

— Չհամարձակվես ինձ մոտ խոսել ուրիշ կանանց մասին:

Եվ մարող աչքերով շշնջաց նրա ականջին, շոյելով մորթիով ու իր շնչով.

— Մի բոպեով... Այսօր դեռ կարելի է…

Բրեստի կայարանի մուտքը լուսավորված երևում էր սառնամանիք գիշերվա մթության մեջ: Շտապով շարժվող բեռնակիրների ետևից մտնելով աղմկոտ կայարան, նա անմիջապես տեսավ Լիին: Նրբիրան, բարձրահասակ, ուղիղ ձևածքի մուգ սև կարակուլե մուշտակով և սև թավշյա մեծ բերետով, որի տակից այտի վրա կախվել էին երկար սև գանգուրները, ձեռքերը կարակուլե մեծ ձեռնամուշտակի մեջ, աղջիկը չարությամբ նայեց նրան սարսափելի գեղեցիկ իր սև աչքերով:

— Համենայն դեպս մեկնո՞ւմ ես, սրիկա,— անտարբեր ասաց աղջիկը՝ նրան թևանցուկ անելով և իր բարձր մոխրագույն կոշիկներով հետը շտապելով բեռնակրի ետևից:— Սպասիր, դեռ կզղջաս, ինձ նման ուրիշ մեկին չես գտնի, կմնաս քո այդ հիմար բանաստեղծուհու հետ:

— Այդ քո ասած հիմարը դեռ բոլորովին երեխա է, Լի, ինչպե՞ս ես հոգուդ մեղք վերցնում ուրիշ բաներ մտածելով:

— Լսիր: Բայց ես հիմար չեմ: Ու թե դա ճիշտ է, իսկապես կա այդ չգիտեմ ինչը, վրադ ծծմբաթթու եմ լցնելու:

Մեկնելու պատրաստ գնացքի տակից, որ վերևից լուսավորված էր փայլատ էլեկտրական գնդերով, տաք ֆշշոցով կաուչուկահոտ գորշ շոգի էր դուրս գալիս: Միջազգային վագոնը մյուսներից տարբերվում էր փայտյա երեսպատվածքով: Ներսում, կարմիր գորգով ծածկված նեղ միջանցքում, դրոշմատիպ կաշվով պատած պատերի խայտաբղետ փայլի և դռների հաստ, հատիկավոր ապակիների մեջ արդեն արտասահման էր: Գնացքի լեհ ուղեկցողը՝ համազգեստի դարչնագույն բաճկոնով, բացեց փոքրիկ կուպեի դուռը, որ շատ տաք էր, արդեն պատրաստված թարմ անկողնով, մեղմ լուսավորված մետաքսե կարմիր լուսամփոփի տակ առնված սեղանի լամպիկով:

— Ինչ բախտավոր ես,— ասաց Լին:— Այստեղ նույնիսկ սեփական պետքարան ունես: Իսկ կողքի՞դ ով է: Գուցե մի անզգամ ուղեկցուհի՞:

Եվ քաշեց կողքի կուպեի դուռը.

— Ոչ, փակ է: Էհ, լավ աստղի տակ ես ծնվել: Շուտ համբուրիր ինձ, հիմա երրորդ զանգը կխփի…

Նա ձեռքը հանեց ձեռնամուշտակից, երկնագույն-սպիտակ, նուրբ նիհար, երկար, սուր եղունգներով, և գալարվելով, ամբողջ էությամբ փարվեց նրան, չափից ավելի փայլեցնելով աչքերը, համբուրելով ու կծոտելով նրա մերթ շրթունքները, մերթ այտերը, շշնջալով.

— Ես քեզ պաշտում եմ, պաշտում, սրիկա:

Սև պատուհանից դուրս հրե վհուկի պես ետ էին սլանում խոշոր նարնջագույն կայծեր, երևում-անհետանում էին գնացքից լուսավորված սպիտակ ձյունալանջեր ու սոճու սև անտառաթավուտներ՝ խորհրդավոր ու մռայլ իրենց անշարժությամբ, իրենց ձմեռվա գիշերային կյանքի խորհրդավորությամբ: Նա փակեց սեղանի տակի շիկացած վառարանը, սառն ապակու վրա քաշեց թանձր վարագույրը և բախեց լվացարանի կողքի դուռը, որը նրան միացնում էր կողքի կուպեին: Այնտեղի դուռը բացվեց և ծիծաղելով ներս մտավ

Գենրիխը, շատ բարձրահասակ, մոխրագույն զգեստով, շեկ-լիմոնագույն մազերը հունական սանրվածքով հավաքած, անգլուհու նման նուրբ դիմագծերով, աշխույժ, սաթե դարչնագույն աչքերով:

— Հը, իրար հրաժեշտ տվեցի՞ք: Ես ամեն ինչ լսեցի: Ամենից շատ ինձ դուր եկավ, ինչպես դուռս կոտրում էր ու ինձ անզգամ կոչեց:

— Սկսում ես խանդե՞լ, Գենրիխ:

— Ոչ թե սկսում եմ, այլ շարունակում: Եթե նա այդքան վտանգավոր չլիներ, վաղուց պահանջած կլինեի նրան հեռացնել:

— Բանն էլ հենց այն է, որ վտանգավոր է, դեռ փորձիր դրա նմանից հեռացիր: Եվ հետո, ես հո դիմանում եմ քո ավստրիացուն, և այն, որ վաղը չէ մյուս օրը պետք է նրա հետ գիշերես:

— Ոչ, նրա հետ չեմ գիշերի: Դու հիանալի գիտես, որ մեկնում եմ նախ և առաջ նրանից բաժանվելու համար:

— Դա կարող էիր և նամակով անել: Ու հիանալի կերպով մեկնել հենց ինձ հետ:

Կինը հառաչեց և նստեց, փայլուն մատներով մեղմորեն ուղղելով մազերը, արծաթե ճարմանդներով մոխրագույն զամշե կոշիկներով ոտքը ոտքին գցած.

— Ոչ, սիրելիս, ես ուզում եմ նրա հետ այնպես բաժանվել, որ հնարավորություն ունենամ շարունակելու նրա մոտ աշխատանքս: Նա հաշվենկատ մարդ է և համաձայն կլինի հաշտ բաժանումի: Ո՞ւմ պիտի գտնի, որ ինձ նման նրա ամսագիրը լցնի Մոսկվայի և Պետերբուրգի ամեն տեսակի թատերական, գրական և արվեստի

սկանդալային նորություններով: Ո՞վ պիտի թարգմանի և հաջողացնի տպագրել նրա հանճարեղ նովելները: Այսօր ամսի տասնհինգն է: Դու, ուրեմն, Նիցցայում կլինես տասնութին, իսկ ես՝ քսանից քսանմեկից ոչ ուշ: Եվ բավական է այդ մասին խոսենք, չէ՞ որ ես ու դու նախ և առաջ լավ բարեկամ ու ընկեր ենք:

— Ընկեր…— ասաց նա, ուրախ նայելով կնոջ նուրբ դեմքին՝ այտերին ալ-թափանցիկ բծերով:— Իհարկե, քեզնից լավ ընկեր, Գենրիխ, ես երբեք չեմ ունենա: Քեզ հետ և միայն քեզ հետ եմ ես ինձ միշտ թեթև, ազատ զգում, կարող եմ խոսել ամեն ինչի մասին, ինչպես իսկական բարեկամի հետ, բայց գիտե՞ս որն է դժբախտությունը: Ես ավելի ու ավելի եմ սիրահարվում քեզ:

— Իսկ ո՞ւր էիր երեկ երեկոյան:

— Երեկոյա՞ն: Տանը:

— Բայց ո՞ւմ հետ: Էհ, տեր ընդ քեզ: Իսկ գիշերը քեզ տեսել են «Ստրելնայում», դու ինչ-որ մեծ խմբի հետ ես եղել առանձին սենյակում, գնչուներով: Այ դա արդեն ցածր կարգի բան է՝ Ստյոպաներ, Գրուշաներ, նրանց կործանող աչքերը...

— Իսկ վիեննական հարբեցողները, Պշիբիշևսկու նման...

— Դրանք, բարեկամս, պատահականություն են և բնավ ոչ իմ ճաշակի: Նա իսկապե՞ս այնքան գեղեցիկ է, ինչպես ասում են, այդ Մաշան:

— Գնչուները նույնպես իմ ճաշակի չեն, Գենրիխ: Իսկ Մաշան…

— Լավ, լավ, նկարագրիր նրան ինձ:

— Ոչ, դուք իսկապես խանդոտ եք դառնում, Ելենա Գենրիխովնա: Ինչը՞ նկարագրեմ, դու, ինչ է, գնչուհի չե՞ս տեսել: Շատ նիհար է ու նույնիսկ սիրուն էլ չի՝ հարթ, ձյութի գույնի մազեր, բավական կոպիտ սրճագույն դեմք, անմիտ կապտավուն ակնասպիտակուցներ, ձիու անրակներ ինչ-որ դեղին խոշոր ապարանջանի մեջ, տափակ փոր... այդ մեկը, ասեմ, բավական լավ է սոխի կճեպի ոսկեգույն մետաքսե երկար զգեստի մեջ: Ու գիտես, որ ձեռքն է առնում հին ծանր մետաքսից շալը ու սկսում է դափի տակ շարժվել փեշի տակից փոքրիկ կոշիկները դոփդոփելով, արծաթե երկար ականջօղերը թափ տալով՝ դա արդեն փորձանք է: Բայց գնանք ճաշելու:

Կինը վեր կացավ, թեթևակի քմծիծաղելով.

— Գնանք: Դու անուղղելի ես, բարեկամս: Բայց գոհ լինենք այնքանով, ինչ աստված տվել է: Տես ի՛նչ լավ է մեզ մոտ: Երկու հիանալի փոքրիկ սենյակ:

— Եվ մեկը բոլորովին ավելորդ...

Կինը գլխին զցեց օրենբուրգյան գործված գլխաշորը, նա գլուխը ծածկեց ճամփորդական գլխարկով և սկսեցին ճոճվելով քայլել վագոնների անվերջանալի թունելներով, անցնելով երկաթյա վագոնների միջև եղած ցուրտ, միջանցիկ, ձյունափոշի թափող ծալքավոր պատնեշի ճռճռացող կամրջակներով:

Նա վերադարձավ մենակ, նստել էր ռեստորանում, ծխում էր: Կինը ավելի շուտ գնաց: Երբ վերադարձավ, տաք կուպեում զգաց իսկական ընտանեկան գիշերվա երջանկություն: Կինը անկողնու վրա բացել էր ծածկոցի և սավանի եզրը և հանել նրա գիշերային սպիտակեղենը, սեղանին էր դրել գինին, տաշեղիկներից հյուսկեն տուփի մեջ դարսված տանձը և կանգնած էր լվացարանի հայելու առաջ հերակալները շրթունքների մեջ սեղմած, մերկ ձեռքերը բարձրացրած մազերին, պիրկ կրծքերը բաց, արդեն միայն շապիկով և մերկ ոտքերը աղվեսամորթիով եզերված գիշերային մաշիկների մեջ: Նրա մեջքը բարակ էր, ազդրերը լիակշիռ, ոտքի կոճերը կոկիկ: Նա երկար համբուրում էր կնոջը կանգնած, հետո նստեցին անկողնուն և սկսեցին խմել հոենոսյան գինին, դարձյալ համբուրվելով գինուց թաց շրթունքներով:

— Հապա Լի՞ն,— ասաց կինը:— Մաշա՞ն:

Գիշերը, մթության մեջ, կնոջ կողքին պառկած, նա ասում էր կատակի տված տխրությամբ:

— Ախ, Գենրիխ, ինչպես եմ սիրում ես այս վագոնային գիշերները, ճոճվող վագոնի այս մթությունը, վարագույրի ետև երևացող ու անցնող կայարանների լույսերը, և ձեզ, ձեզ «կիներ մարդկության, թակարդ մարդ հրապուրելու»: Այդ, «թակարդը» հիրավի անբացատրելի, աստվածային ու սատանայական մի բան է, և երբ ես գրում եմ այդ մասին, փորձում եմ արտահայտել այդ, ինձ մեղադրում են անամոթության, ցածր հակումների մեջ... Ստոր հոգիներ: Լավ է ասված հին մի գրքում. «Գրողը նույնպես լիակատար իրավունք ունի համարձակ լինելու սիրո և սիրո անձանց խոսքով նկարագրելու, ինչպես բոլոր ժամանակներում տրվել է այդ իրավունքը նման դեպքում գեղանկարիչներին և քանդակագործներին. միայն ստոր հոգիներն են ստոր բան տեսնում նույնիսկ գեղեցիկի կամ սարսափելիի մեջ»:

— Իսկ Լիի կրծքերը,— հարցրեց Գենրիխը,— հավանաբար

սուր-սուր են, փոքրիկ ու տարբեր կողմեր ցցվա՞ծ: Հավաստի նշան հիստերիկ կանանց համար:

— Այո:

— Նա հիմա՞ր է:

— Ոչ... Ասենք, չգիտեմ: Երբեմն կարծես շատ խելացի է, ողջամիտ, պարզ, թեթև և ուրախ, խոսքի կեսից ամեն ինչ հասկանում է, իսկ երբեմն բորբոքված այնպիսի փքուն, գռեհիկ կամ չար անհեթեթություններ է դուրս տալիս, որ ես նստում ու լսում եմ նրան ապուշի լարվածությամբ և բթությամբ, ինչպես խուլուհամը... Բայց դու ինձ ձանձրացրիր Լիի մասին խոսելով:

— Ձանձրացրի, որովհետև այլևս չեմ ուզում քեզ ընկեր լինել:

— Ես էլ այլևս չեմ ուզում: Ու նորից ասում եմ քեզ. գրիր քո այդ Վիեննայի սրիկային, որ կհանդիպես իրեն վերադարձի ճանապարհին, իսկ հիմա անառողջ ես, գրիպից հետո պետք է հանգստանաս Նիցցայում: Ու կմեկնենք առանց բաժանվելու և ոչ թե Նիցցա, այլ ուրիշ մի տեղ, Իտալիա...

— Իսկ ինչո՞ւ ոչ Նիցցա:

— Չգիտեմ: Հանկարծ չգիտես ինչու չուզեցի: Գլխավորը՝ կմեկնենք միասին:

— Սիրելիս, այդ մասին արդեն խոսել ենք: Եվ ինչո՞ւ Իտալիա: Դու չէի՞ր ասում, որ ատում ես Իտալիան:

— Այո, ճշմարիտ է: Ես Իտալիայի վրա կատաղած եմ էսթետություն անող մեր ապուշների պատճառով: «Ֆլորենցիայում ես սիրում եմ միայն տրեչենտոն...»: Իսկ ինքը ծնվել է Բելեվոյում և Ֆլորենցիայում եղել է ամբողջ կյանքում ընդամենը մի շաբաթ: Տրեչենտո, կվատրոչենտո... Եվ ես ատեցի բոլոր դրանց՝ Ֆրա Անջելիկոյին, Գիրլյանդայոյին, տրեչենտոն, կվատրոչենտոն և նույնիսկ Բեաթրիչեին ու չոր-չոր դեմքով Դանտեին իր կնկա գլխանոցով ու դափնեպսակով... Դե, եթե ոչ Իտալիա, գնանք ուրեմն Տիրոլ, Շվեյցարիա, մի խոսքով լեռներ, մի որևէ քարե գյուղակ այդ երկնքի մեջ խրված ձյունից գույնզգույն գրանիտե հրեշների մեջ... Մի պատկերացրու՝ սուր, խոնավ օդ, այդ վայրի քարե խրճիթները, թեք տանիքները կորամեջք քարե կամրջի մոտ կուտակված, դրանց տակ արագահոս աղմուկը կաթնականաչ գետակի, իրար սեղմված, մոտ-մոտ շարժվող ոչխարի հոտի զանգուլակների զնգզնգոցը, և հենց այդտեղ էլ դեղատուն ու խանութ ալպյան ցուպերով, սարսափելի տաք փոքրիկ հյուրանոց՝ դռան վրա եղջերվի ճյուղավոր եղջյուրով, ասես հատկապես սարքված չեչաքարից... մի խոսքով, կիրճի հատակը, ուր հազար տարի ապրում է աշխարհին օտար այդ լեռնային վայրիությունը, ծնում է, ամուսնացնում, թաղում, և դարեդար երևում է նրա վրա վեր խոյացող գրանիտներից բարձր մի հավերժորեն սպիտակ լեռ, նման վիթխարի անկենդան հրեշտակի: Իսկ ի՜նչ աղջիկներ են այնտեղ: Գենրիխ, պիրկ, կարմրաթուշ, սև սեղմիրաններով, կարմիր բրդյա գուլպաներով…

— Ախ, այս բանաստեղծները,— ասաց կինը, քնքշալի հորանջելով:— նորից աղջիկներ, աղջիկներ... Ոչ, գյուղակում ցուրտ է, սիրելիս: Եվ ոչ մի աղջիկ այլևս չեմ ուզում...

Վարշավայում, իրիկնադեմին, երբ գնում էին Վիեննայի կայարան, դիմացից թաց քամի էր փչում նոսր ու խոշորակաթիլ սառն անձրևով, քամին զզզզում էր մեծ կառքի նստիքին նստած, զույգ ձիերը կատաղած քշող կնճռոտ կառապանի լիտվական բեղերը, նրա կաշվե գլխարկից անձրևաջուր էր հոսում, փողոցները գավառային տեսք ունեին:

Լուսաբացին, վարագույրը բացելով, նա տեսավ թաց ձյունից սպիտակ հարթություն, որի վրա տեղ-տեղ կարմրին էին տալիս աղյուսատնակներ: Դրանից անմիջապես հետո կանգ առան և երկար կանգնած էին մի մեծ կայարանում, ուր, Ռուսաստանից հետո, ամեն ինչ թվում էր շատ մանր՝ երկաթուղու վագոնիկները, նեղլիկ երկաթգծերը, երկաթյա լապտերասյուները, ու ամեն տեղ սևին էին տալիս քարածխի կույտեր. հրացանավոր փոքրիկ մի զինվոր թեք կտրվածքի բարձրադիր գլխարկով և կարճ մկնա-երկնագույն շինելով գալիս էր շոգեքարշային դեպոյի կողմից երկաթգծերն անցնելով, պատուհանների տակ տախտակամածին քայլում էր երկայնահասակ բեղավոր մեկը՝ նապաստակի մորթուց օձիքով վանդակավոր բաճկոնով և տիրոլյան՝ կանաչ ու հետևից և գունավոր փետուրով գլխարկը գլխին, Գենրիխն արթնացավ և շշուկով խնդրեց վարագույրը ծածկել: Նա վարագույրն իջեցրեց և պառկեց կնոջ տաքության մեջ, նրա վերմակի տակ: Կինը գլուխը դրեց նրա ուսին և լաց եղավ:

— Գենրիխ, քեզ ի՞նչ պատահեց,— ասաց նա:

— Չգիտեմ, սիրելիս,— պատասխանեց կինը կամացուկ:— Լուսաբացին ես հաճախ եմ լաց լինում: Արթնանում ես ու հանկարծ սկսում ես խղճալ քեզ... Մի քանի ժամից դու կմեկնես, իսկ ես կմնամ մենակ, կգնամ սրճարան իմ ավստրիացուն սպասելու... Իսկ երեկոյան նորից սրճարան և հունգարական նվագախումբ, այդ հոգի քրքրող ջութակները...

— Այո, այո, և ականջ ծակող ցիմբալները... Դրա համար էլ ասում եմ՝ գրողի ծոցն ուղարկիր ավստրիացուն և միասին շարունակենք ճամփան:

— Ոչ, սիրելիս, չի լինի: Ես ինչո՞վ պիտի ապրեմ, եթե նրա հետ գժտվեմ: Բայց երդվում եմ քեզ, նրա և իմ միջև ոչինչ չի լինի: Գիտես, վերջին անգամ Վիեննայից իմ մեկնելուց ես և նա, ինչպես ասում են, արդեն պարզել էինք մեր հարաբերությունները՝ գիշերը, փողոցում, գազի լապտերի տակ: Եվ դու չես կարող պատկերացնել, թե ինչ ատելություն կար նրա դեմքին: Դեմքը գազի լույսից ու կատաղությունից գունատ-կանաչ էր, ձիթապտղի, պիստակի գույնի... Բայց գլխավորը, ինչպես կարող եմ ես հիմա, քեզնից հետո, այս կուպեից հետո, որ մեզ արդեն այնքան մոտեցրեց...

— Լսիր, իսկապե՞ս:

Կինը սեղմեց նրան իրեն և սկսեց համբուրել այնքան պինդ, որ նրա շունչը կտրվեց:

— Գենրիխ, քեզ չեմ ճանաչում:

— Ես էլ ինձ չեմ ճանաչում: Բայց արի, արի ինձ մոտ:

— Սպասիր...

— Ոչ, ոչ, հենց այս րոպեիս:

— Միայն մի խոսք. ասա ստույգ, ե՞րբ ես Վիեննայից մեկնելու:

— Այսօր երեկոյան, հենց այս երեկոյան:

Գնացքն արդեն շարժվում էր, դռան մոտով գորգի վրա փափուկ քայլում ու զնգզնգում էին սահմանապահների կոշկախթանները:

Եվ եղավ Վիեննայի կայարանը, և գազի, սուրճի ու գարեջրի հոտը, և մեկնեց Գենրիխը շքեղ հագնված, տխուր ժպտացող, նյարդային, նվազ եվրոպական քնձռոտ ձիով, բաց կառքով՝ լայն թիկնոցավոր ու լաքի ցիլինդրով կարմրաքիթ կառապանը բարձր նստիքին, որ ձիու վրայից հանել էր սթարն ու քշում, բզում էր նրան երկար մտրակով, երբ ձին լարեց իր արիստոկրատական, երկար, դողդողացող ոտքերն ու կարճ կտրած պոչը շարժելով վազեց դեղին տրամվայի ետևից: Եղավ և Զեմմերինգը և արտասահմանյան ողջ տոնականությունը լեռնային կեսօրի, ձախ կողմի տաք պատուհանը վագոն-ռեստորանում, ծաղկեփունջը, «Ֆեսլաու» կարմիր գինի կուրացուցիչ-սպիտակ սեղանիկին պատուհանի մոտ և կուրացուցիչ-սպիտակ փայլ կեսօրյա ձյունե բարձունքներին, որ իրենց շքեղ-խնդուն զգեստավորությամբ մխրճվել էին երկնքի դրախտային ինդիգոյի մեջ, ու թվում էին շատ մոտ գնացքից, որ գալարվում էր նեղլիկ անդունդի զառիկողերին, ուր ցուրտ կապտին էր տալիս ձմեռային դեռ վաղորդյան ստվերը: Սառնամանիք, անապական-անարատ, մաքուր, գունատ կարմրին ու մթնելով՝ կապտին տվող իրիկուն էր ինչ-որ լեռնանցքում, իր ողջ կանաչ եղևնիներով սուզված թարմ փափուկ ձյան ահռելի քանակության մեջ: Հետո երկար կանգառ եղավ մի մութ կիրճում, իտալական սահմանի մոտ, Դանտեի դժոխքի սև լեռների մեջ, և մի բորբոքված-կարմիր, ծխացող կրակ թունելի մրոտ երախը մտնելիս: Հետո՝ ամեն ինչ արդեն այլ էր, նախկին ոչնչին ոչ նման. հին, գույնը գցած վարդագույն իտալական կայարան և աքլորի զոռոզություն ու աքլորի փետուրներ կայարանի կարճոտն զինվորների սաղավարտներին, և բուֆետի փոխարեն կայարանում միայնակ մի տղա, որ ծուլորեն գլորում էր գնացքի կողքով ձեռնասայլակը, վրան միայն նարինջ շարած: Իսկ հետո արդեն գնացքի ազատ, գնալով արագացող վազքը դեպի ցած, ցած ու շարունակ մեղմացող, տաքացող մթության միջից գնացքի պատուհաններից ներս լցվող քամին Լոմբարդյան հարթավայրի, որ հեռվում ծածկված էր գրավիչ Իտալիայի մեղմ լույսերով: Իսկ հաջորդ, արդեն բոլորովին ամառային օրվա երեկոյան՝

Նիցցայի կայարանն էր, սեզոնային բազմամարդությունը նրա կառամատույցներում…

Կապույտ իրիկնամուտին, երբ մինչև Անտիբյան հրվանդանը, որ մոխրագույն տեսիլի նման անհետանում էր արևմուտքում, աղեղնաձև ադամանդե շղթայով ձգվեցին ծովեզերքի անհամար լույսերը, նա միայն ֆրակով կանգնած էր ծովափնյա հյուրանոցի իր սենյակի պատշգամբում, մտածում էր, որ Մոսկվայում հիմա քսան աստիճան սառնամանիք է, և սպասում, որ հիմա իր դուռը կբախեն և հեռագիր կբերեն Գենրիխից: Հյուրանոցի ճաշասրահում՝ շողշողուն ջահերի, ֆրակների ու կանացի երեկոյան զգեստների նեղվածքի մեջ ճաշելով, նա դարձյալ սպասում էր, որ ահա ուր որ է մինչև զոտկատեղ հասնող երկնագույն համազգեստի բաճկոնով և սպիտակ ձեռնոց հագած տղան կմոտենա և սկուտեղի վրա հարգանքով իրեն կմեկնի հեռագիրը. անուշադիր, անտարբեր ուտում էր արմտիքներով արգանակը, խմում կարմիր բորդո և սպասում. խմում էր սուրճ, ծխում նախասրահում ու դարձյալ սպասում, գնալով ավելի ու ավելի հուզվելով ու զարմանալով, թե ի՞նչ է կատարվում իր հետ, ամենավաղ ջահելությունից սկսած այսպիսի բան իր հետ չէր եղել: Սակայն հեռագիր չկար ու չկար: Փայլելով, արագ վեր ու վար էին սահում վերելակները, հետ ու առաջ վազվզում տղաները ծխախոտ, սիգարներ և երեկոյան թերթեր բաժանելով, նվագեց լարային նվագախումբը՝ հեռագիր չկար ու չկար, իսկ արդեն ժամը տասնմեկն էր, Վիեննայի գնացքը նրան պիտի բերեր տասներկուսին: Նա սուրճի հետ խմեց հինգ գավաթ կոնյակ և հոգնած, զզված, վերելակով գնաց իր սենյակ՝ չարությամբ նայելով համազգեստավոր տղային. «Ահ, ինչ սրիկա է մեծանալու այս խորամանկ, հաճկատար, արդեն մինչև ուղնուծուծը փչացած տղայից: Եվ ո՞վ է բոլոր այս տղաների համար հնարել ինչ-որ անհեթեթ գլխարկներ և բաճկոններ մեկ երկնագույն, մեկ դարչնագույն, ուսադիրներով, եզրաքուղիկներով»:

Հեռագիր չեղավ և առավոտյան: Նա զանգը տվեց, ֆրակով ջահել սպասավորը, սիրուն իտալացի վիթի աչքերով, բերեց սուրճը. «Pas de lettres, monsieur, pas de télégrammes»[1]: Նա պիժամայով կանգնեց դեպի պատշգամբ բաց դռան մոտ, աչքերը կկոցելով արևից և ոսկե ասեղիկներով փայլփլող ծովից, նայելով առափնյա փողոցին, զբոսնողների հոծ բազմությանը, ականջ դնելով ցածից, պատշգամբի տակից լսվող իտալական երգին, երջանկությունից թալկացող, և հաճույքով մտածեց.

[1] Նամակ չկա, պարոն, հեռագիր չկա (ֆր.):

«Այդպես է, թող այդպես լինի: Ամեն ինչ հասկանալի է»:

Նա գնաց Մոնտե Կառլո, երկար խաղում էր, տանուլ տվեց երկու հարյուր ֆրանկ, վերադարձավ ժամանակ սպանելու համար, գրեթե երեք ժամ շրջելով կառքով. դոփ, դոփ, դոփ, դոփ, թրփռ, և մտրակի զիլ շառաչ օդում: Դռնապանը ժպտաց ատամները բացելով.

— Pas de télégrammes, monsieur!

Նա մի տեսակ բթացած հագնվում էր ճաշի գնալու, շարունակ նույն մտքերի մեջ:

«Եթե հիմա հանկարծ դուռը բախեին, ու նա անսպասելի ներս գար, շտապելով, հուզվելով, հետն էլ բացատրելով, թե ինչու չէր հեռագրել, ինչու երեկ չէր եկել, ես, թվում է, կմեռնեի երջանկությունից: Կասեի նրան, որ կյանքում երբեք և ոչ մեկին այնպես չեմ սիրել, ինչպես նրան, որ տերն ինձ շատ բան կների հանուն այսպիսի սիրո, կների նույնիսկ Նադյայի համար. վերցրու ինձ, վերցրու ամբողջությամբ, Գենրիխ: Այո, իսկ Գենրիխը հիմա ճաշում է իր ավստրիացու հետ: Ախ, ինչ հաճույք կլիներ հիմա նրան կատաղի ապտակ հասցնել: Եվ այդ ավստրիացու գլուխը ջարդել շամպայնի շշով, որ հիմա նրանք խմում են միասին»:

Ճաշից հետո նա քայլում էր փողոցներով հոծ բազմության մեջ, տաք օդում, իտալական կոպեկանոց սիգարների քաղցրահոտ ծխի մեջ, դուրս էր գալիս առափնյակ, դեպի ծովի կպրասևը, նայում նրա սև աղեղի թանկագին ապարանջանին, որ դեպի աջ տխուր կորչում էր հեռվում, մտնում էր բարեր և խմում, շարունակ խմում էր՝ մեկ կոնյակ, մեկ ջին, մեկ վիսկի: Հյուրանոց վերադառնալով, գունատ, կավճասպիտակ դեմքով, սպիտակ փողկապ կապած, սպիտակ ժիլետով ու ցիլինդրը գլխին, նա լրջատես ու ասես իմիջիայլոց մոտեցավ դռնապանին, շշնջալով անզգայացող շրթունքներով.

— Pas de télégrammes?

Եվ դռնապանը ձևացնելով, թե ոչինչ չի նկատում, պատասխանեց ուրախ պատրաստակամությամբ.

— Pas de télégrammes, monsieur!

Նա այնքան հարբած էր, որ քնեց հազիվ հանելով միայն ցիլինդրը, վերարկուն և ֆրակը. ընկավ մեջքի վրա ու անմիջապես գլխապտույտ գահավիժեց հրե աստղերով լցված անհատակ մթության մեջ:

Երրորդ օրը նա նախաճաշից հետո պինդ քնեց և արթնանալով հանկարծ սթափ ու հաստատակամ հայացքով նայեց իր ողջ այդ խղճուկ ու ամոթալի պահվածքին: Պահանջեց թեյ մատուցել իր սենյակում և սկսեց հանդերձապահարանից հանել ու ճամպրուկների մեջ դնել իրերը, ջանալով չմտածել այլևս նրա մասին, իր այդ անմիտ, փչացած ուղևորության մասին: Իրիկնադեմին իջավ նախասրահ, պատվիրեց հաշիվը պատրաստել, հանգիստ քայլելով գնաց Կուկի մոտ և տոմս գնեց Վենետիկով Մոսկվա մեկնող երեկոյան գնացքի համար. Վենետիկում կմնամ մի օր և գիշերվա ժամը երեքին՝ ուղիղ, առանց կանգառների ուղիղ տուն, Լոսկուտնայա... Ինչպիսի՞ն է տեսնես այդ ավստրիացին: Ըստ լուսանկարների և Գենրիխի պատմածների՝ հաղթանդամ, ջղուտ, մռայլ ու վճռական հայացքով, իհարկե՝ կեղծ, լայնեզր գլխարկի տակ թեքած դեմքին... Բայց ինչ պետքս է նրա մասին մտածել: Դեռ ինչե՜ր կարող են լինել կյանքում: Վաղը կլինի Վենետիկը: Դարձյալ երգ ու կիթառ փողոցի երգիչների՝ հյուրանոցի տակ առափնյակում լսվում է ականջ ծակող ու անկիրք ձայնը շալն ուսերին սև, գլխաբաց կնոջ, որ ձայնակցում է մուրացկանի գլխարկով կարճոտն, վերևից գաճաճի նմանվող տենորին... ցնցոտիավոր ծերուկ, որ օգնում է գոնդոլ մտնել,— անցյալ տարի օգնում էր նստելու կրակոտ աչքերով սիցիլուհու հետ՝ բյուրեղապակյա ճոճվող ականջօղերով, բացված պատկառուկի ծաղիկը ձիթապտղի գույնի մազերին... ջրանցքի նեխաջրի հոտը, գոնդոլի սգալաքե ներսը, ատամնավոր, գիշատիչ սակրը քթին, նրա ճոճվելը և մակույկաքթին կանգնած ջահել թիավարը կարմիր շարֆը նեղ մեջքին փաթաթած, որ միալար առաջ էր հակվում երկաթին սեղմելով, ձախ ոտքը ետ մեկնած...

Իրիկնանում էր, իրիկնային գունատ ծովը խաղաղ էր ու հարթ, արևակնե փայլին կանաչավուն միաձուլված, ծովի վրա չար ու խղճալի կոկորդ էին պատռում որորները, զգալով վաղվա վատ եղանակը, ծխակապտավուն

արևմուտքը Անտիբյան հրվանդանի ետևում պղտոր էր, որի մեջ երևում էր և մարում արևի նարինջ-արքայանարնջի փոքրիկ սկավառակը: Նա երկար նայում էր այդ սկավառակին անհուսալի, անանց թախծից ճնշված, հետո սթափվեց և հաստատուն քայլեց դեպի իր հյուրանոցը: «Journaux étrangers!»[2]

— բղավեց դեմից վազ տվող լրագրավաճառը և վազելով նրա ձեռքը կոխեց «Նովոյե վրեմյան»: Նա նստեց նստարանին և մայրամուտի մարող լույսի տակ մտացրիվ բացեց լրագիրն ու սկսեց նայել դեռ թարմ էջերը: Ու հանկարծ վեր թռավ ցնցված, կուրացած, ինչպես մագնիումի պայթյունից.

«Վիեննա: 17 դեկտեմբերի: Այսօր «Franzensring» ռեստորանում ավստրիացի հայտնի գրող Արթուր Շպիգլերը ատրճանակի կրակոցով սպանեց ռուս լրագրող և ժամանակակից ավստրիական ու գերմանական շատ նովելիստների թարգմանչուհուն, որ աշխատում էր «Գենրիխ» կեղծանունով»:

10 նոյեմբերի 1940

[2] Օտարերկյա լրագրեր (ֆր.):